

ԾՐԱԳԻՐ

«ԱՆԿՈՂՆԱՅԻՆ ՌԵԺԻՄԻ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ԴԱՍԸՆԹԱՑԻ

2022թ.-ից կրկնողաբար, ք. Երևան (ԵՊԲՀ հետբուժական և շարունակական կրթության կենտրոնի

անէսթեզիոլոգիայի և ինտենսիվ թերապիայի ամբիոն՝ «Էրեբունի» բժշկական կենտրոն)

Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան

Օր 1	
10:00-11:30	Դասախոսություն Անկողնային ռեժիմի ֆիզիոլոգիան: Երկարատև հորիզոնական դիրքում օրգանիզմի տարբեր օրգան համակարգերի ախտաբանական փոփոխությունները: Անշարժության ազդեցությունը օրգանիզմի վրա
11:30-12:00	Ընդմիջում
12:00-15:00	Գործնական աշխատանք Պացիենտի վիճակի ծանրության գնահատում՝ ֆիզիկական զննում, լաբորատոր քննությունների համար նմուշառումներ, պացիենտի նախապատրաստում գործիքային հետազոտություններին: Անկողնային ռեժիմի պացիենտների մոնիթորինգի և խնամքի համար կիրառվող սարքավորումներ: Պացիենտի մարմնի ամենօրյա հիգիենիկ մշակում և խնամք, ֆիզիոլոգիական պահանջների ապահովում: Համայն ինտենսիվ թերապիայի բաժանմունքում (ԻԹԲ)
Օր 2	
10:00-11:30	Դասախոսություն Շնչական համակարգի ախտաբանական փոխությունները երկարատև անկողնային ռեժիմի դեպքում: Շնչական բարդություններ: Վենտիլատոր-կապակցված թոքաբորբեր: Դրանց կանխարգելումը
11:30-12:00	Ընդմիջում
12:00-14:30	Գործնական աշխատանք Շնչական թերապիա: Հազի խթանում: Խորը շնչառություն: Դրդիչ սպիրոմետրերի կիրառում: Բրոնխալուծ միջոցների ինհալացիա: Կրծքավանդակի բախում: Դիրքային դրենաժ: Շնչուղիների սանացիա: Օքսիգենոթերապիա: Գործնականում շնչական թերապիայի միջոցառումների և օքսիգենոթերապիայի իրականացում ԻԹԲ պացիենտներին
Օր 3	
10:00-12:00	Գործնական աշխատանք Պառկելախոցեր: Պառկելախոցերի ռիսկի գնահատումը պացիենտի մոտ, միջազգային սանդղակների կիրառումը: Պառկելախոցերի ծանրության աստիճանի գնահատումը: Պառկելախոցերի կանխարգելումը: Բուժման և խնամքի առանձնահատկությունները տարբեր աստիճանների պառկելախոցերի դեպքում
12:00-12:30	Ընդմիջում
12:30-14:30	Գործնական աշխատանք Թրոմբոտիկ բարդություններ: Թրոմբոտիկ բարդությունների ռիսկի գնահատումը: Թրոմբոտիկ բարդությունների կլինիկական արտահայտությունները: Թրոմբոտիկ

	բարդությունների կանխարգելումը և բուժումը դեղորայքային և ոչ դեղորայքային միջոցներով
Օր 4	
10:00-12:30	Գործնական աշխատանք Սթրեսային խոցեր: Սթրեսային խոցերի դիսկի գնահատումը պացիենտի մոտ: Սթրեսային խոցերի կանխարգելումը և բուժումը դեղորայքային և ոչ դեղորայքային միջոցներով: Պացիենտի կերակրումը: Նազոգաստրալ զոնդով, գաստրոստոմայով պացիենտների կերակրումը և խնամքը: Սթրեսային խոցերով պացիենտների մոտ արյունահոսության արտահայտությունները: Բուժքրոջ վարվելակարգը
12:30-13:00	Ընդմիջում
13:00-15:00	Գործնական աշխատանք Միզուղիների ինֆեկցիոն բարդություններ: Պացիենտի մոտ բարդությունների դիսկի գնահատումը: Միզուղիների ինֆեկցիոն բարդությունների կլինիկական արտահայտությունները: Միզուղիների ինֆեկցիոն բարդությունների կանխարգելումը և բուժումը: Միզային կաթետերի ամենօրյա խնամքը: Պացիենտի վայր ընկնելու դիսկի գնահատում: Միջազգային սանդղակի կիրառում: Վայր ընկնելու կանխարգելման միջոցառումներ
Օր 5	
10:00-12:00	Գործնական աշխատանք Կաթետեր-կապակցված արյան հունի վարակ: Պերիֆերիկ և կենտրոնական երակային կաթետերների, համակարգերի խնամքը: Ֆլեբիտ: Սեպսիս: Կլինիկական արտահայտությունները: Պացիենտի վարման կանոնակարգը կաթետեր-կապակցված արյան հունի վարակի դեպքում
12:00-12:30	Ընդմիջում
12:30-14:30	Գործնական աշխատանք Պացիենտի վարակային անվտանգություն: Պացիենտի հոգեֆիզիկական վիճակի բարելավում, դելիրիումի կանխարգելում և կառավարում: Մասնավոր դեպքերի քննարկում, տեսական գիտելիքների և գործնական հմտությունների գնահատում

Թիրախային լսարան՝ բուժքույրեր:
Մասնակիցների ակնկալվող թվաքանակ՝ 1-10 հոգի:

Դասընթացավար՝ Հասմիկ Քոչարյան: